

## **ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

### **ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐԸ ԻՐ ՎԵՐՋԻՆ ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

#### **Կարինե Առաքելյան**

Բանասիրական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող  
ՀՀ, Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15  
Էլ. հասցե՝ karine.arakelyan.2016@mail.ru  
Հոդվածը ներկայացվել է 01.05.2018, գրախոսվել է 29.10.2018, ընդունվել է  
տպագրության 30.04.2020

#### **Ներածություն**

Վլադիմիր Բարխուդարյանի անունը քաջ հայտնի ու սիրելի է գիտական հանրությանը: Անվանի պատմաբանը հեղինակ է բազմաթիվ մենագրությունների, գիտական հոդվածների, միջազգային գիտաժողովներում ընթերցված զեկուցումների: Գիտական գործունեությունը նա միշտ զուգակցել է գիտակազմակերպչական և մանկավարժական աշխատանքի հետ: Երկար տարիներ դասավանդել է ԵՊՀ-ում՝ որպես հայ ժողովրդի պատմության ամբիոնի պրոֆեսոր: Հեղինակ է մի շարք դասագրքերի, ուսումնասօժանդակ ձեռնարկների: Եղել է ՀԳԱ ակադեմիկոս-քարտուղար, փոխնախագահ, ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ինչպես նաև Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ: Արժանացել է տարբեր պարգևների, մեդալների, շքանշանների:

#### **Բանասիրական պրպտումները «Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմություն X-XIV դդ.» աշխատության մեջ**

«Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության X-XIV դդ.» գիրքը եղավ Վ. Բարխուդարյանի վերջին մենագրությունը: Չնայած պատկառելի տարիքին, այդ գրքի վրա պատմաբանը աշխատում էր երիտասարդական ավյունով ու ջանասիրությամբ: Այն լույս տեսավ 2016 թվականին և նվիրված է նշված դարաշրջանի հայ մշակույթի պատմությանը, որը պատմական այս փուլում հասել էր զարգացման բարձրագույն աստիճանի: Պատմաբանի մոտեցմամբ դիտարկվում է տնտեսական-քաղաքական կյանքը, ցույց է տրվում կրթության, գիտության, բանասիրության, բնական գիտությունների, արվեստի տարբեր ճյուղերի՝ երաժշտույթ-

յան կերպարվեստի, ճարտարապետության, կիրառական արվեստի և այլն, զարգացման ընթացքը և փոխկապակցվածությունը և հանգում ուշագրավ եզրակացությունների:

Այստեղ հատկապես ուզում ենք անդրադառնալ գրքի բանասիրական ժառանգությանը նվիրված հատվածին, որը լավագույնս է արտահայտում դարաշրջանի ոգին, ժամանակի հայ մարդու աշխարհայացքը, նրան հուզող խնդիրները, գալիքի նրա տեսլականը: Երկրի հոգևոր, քաղաքական ու տնտեսական իրավիճակը նպաստավոր հիմք էր ստեղծում արվեստի և գրականության զարգացման համար: Բնավ պատահական չէ, որ հենց այս ժամանակաշրջանում է ամբողջացել հայ ժողովրդի հերոսական էպոսը՝ «Սասնա ծռերը», իսկ Նարեկա վանքի հռչակավոր վանականը երկնել իր անկրկնելի Մատյանը:

Բարխուդարյանն առանձին ենթագլուխներ է նվիրել այս գլուխգործոցներին՝ մեկ անգամ ևս փաստելով դրանց անսահման կարևորությունը մեր ազգային կյանքում:

Հայ ժողովրդական դյուցազնավեպի ակունքները հասնում են մինչև Քրիստոսից առաջ VIII դար: Այս մասին է վկայում Աստվածաշունչը Եսայի մարգարեի գրքում. «Եւ դարձաւ անդրէն՝ գնաց Սենեքերիմ արքայն Ասորեստանեայց, և բնակեաց ի Նինուէ: Եւ մինչդեռ երկիր պագանէր ի տան իւրում Նասրաքայ կոոց իւրոոց, Ադրամելէք եւ Սարասար որդիք նոր սպանին գնա սրով, եւ ինքեանք գնային փախստական ի Հայս»<sup>1</sup>:

Էպոսը վերջնական ձևավորման է հասել զարգացած միջնադարում՝ IX դարում, երբ հայ ժողովուրդը հերոսական պայքար էր մղում արաբ զավթիչների դեմ: Սակայն, ինչպես նշում է հեղինակը, այն ներառել է անցյալը «սկսած Հայկի և Բելի պայքարից, այսինքն՝ հայ ժողովրդի առաջացման, բռնակալ իշխանությունների դեմ պայքարի ժամանակաշրջանից... Հայկական էպոսը հայ ժողովրդի ամբողջ պատմական խտացումն է հնագույն ժամանակաշրջանից սկսած մինչև զարգացած միջնադարը ներառյալ»<sup>2</sup>: Ինչպես նաև «Հայկական էպոսը հայ ժողովրդի դարավոր ազատագրական պայքարի գեղարվեստական ընդհանրացումն է: Այնքան, որքան այդ պայքարը եղել է շարունակական, հայկական պատմավեպն էլ մշտապես նորացվել, համալրվել է և մնացել թարմ ու կենդանի» (37):

Քաջատեղյակ լինելով հայկական էպոսի և էպոսագիտության մասին հայ և օտարալեզու գրականությանը, ինչպես նաև այլ ժողովուրդների ասքերին՝ Բարխուդարյանն անում է ուշագրավ համեմատություններ ու եզրակացություններ: Նախ, որ բոլոր ծանոթ էպոսներն առաջացել են «հասուն

<sup>1</sup> Աստուածաշունչ մատեն 1997, 744:

<sup>2</sup> Բարխուդարյան 2016, 26-27: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ:

ավատատիրության նույն դարաշրջանում. ֆիննական «Կալեվալա», ղրղզական «Մանաս» էպոսները ձևավորվել են IX-X դարերում, «Երգ Ռուլանդի մասին» ֆրանսիականը՝ X-XII դդ., իսպանական «Երգ իմ Սիդի մասին» և ռուսական «Ասք Իգորի գնդի մասին»՝ XII դարում, իսկ գերմանական Նիբելունգների երգը՝ XIII դարի սկզբին և այլն» (25): Ունենալով բազմաթիվ ընդհանրություններ՝ բոլորն էլ ավարտվում են արդարության, բարության հաղթանակով: Սակայն կան նաև ակնառու տարբերություններ, որոնք չեն վրիպել հեղինակի աչքից: Առաջինը՝ մեր դյուցազնավեպում չափազանց բարձր է գնահատվում արդար, ստեղծագործ աշխատանքը՝ որպես կյանքի շարունակականության միակ ընդունելի միջոց և աղբյուր: Չափազանց բարձր են գնահատվում ժամանակի ընթացքում ձևավորված ազգային ավանդույթների ամուր պահպանումը և ապագա սերունդներին փոխանցումը: «Սասունցի Դավիթ» էպոսի հերոսները թշնամու դեմ մենակ են կռվում, իսկ այլ էպոսների հերոսները՝ զորքով:

Մեր էպոսում տեղ չունի դավաճանությունը, կա անսահման հարգանք կնոջ նկատմամբ: Մեր էպոսի հերոսները դուրս են եկել ժողովրդի ծոցից, միշտ եղել ժողովրդի կողքին, նրա մի մասնիկը: Ժողովրդականության մի կարևոր հատկանիշ էլ համարվել է էպոսի լեզուն: Եթե մյուս ժողովուրդների ասքերը հիմնականում պատմական որևէ իրադարձության արտացոլումն են, ապա ինչպես նշում է Վ. Բարխուդարյանը. «Պատմության հոլովույթում օտարերկրյա հզոր ուժերը հաճախ ավերել են երկիրը, ոչնչացրել պատմական հուշարձանները, հոգևոր և աշխարհիկ շինությունները, բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի ազատության ձգտող կենդանի ոգին: Սա է «Սասունցի Դավիթ» էպոսի հիմնական գաղափարը, նրա էությունը» (38):

Զարգացած միջնադարում հայ ժողովրդի մյուս մեծագույն ձեռքբերումը Սուրբ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունն է, որին ևս բավական հանգամանալից անդրադարձել է հեղինակը: Ժամանակի ընձեռած հնարավորություններից զատ՝ Բարխուդարյանն ուշադրություն է հրավիրում այն միջավայրի վրա, որտեղ ծնվել և հասակ է առել մեծ բանաստեղծը՝ Նարեկացու ընտանիքի վրա, որի բոլոր անդամներն անմնացորդ նվիրված էին մայր եկեղեցու և հայրենիքի պայծառացման սրբազան առաքելությանը: Դրան մեծ չափով նպաստում էին Նարեկավանքը (կառուցված 930-ական թթ.) և այնտեղ գործող դպրոցը: Այն ուներ գրադարան-մատենադարան և հարմարավետ պայմաններ ստեղծագործական կյանքի համար: Հեղինակն անդրադառնում է Նարեկյան դպրոցի երեք նշանավոր ներկայացուցիչների՝ Խոսրով Անձևացու, Անանիա և Գրիգոր Նարեկացիների գրական ժառանգությանը:

Գրիգոր Նարեկացու հայրը՝ Խոսրով Անձևացին, եղել է ժամանակի եկեղեցական խոշորագույն գործիչներից մեկը, թողել է գրական հարուստ ժառանգություն, հատկապես հայտնի է նրա «Մեկնութիւն ժամանակագրութեան» երկը, որտեղ հեղինակը փորձում է բացատրել, ժողովրդին մատչելի դարձնել արարողությունների, աղոթքների, սաղմոսների ներքին իմաստը: Անձևացին չափազանց նախանձախնդիր էր հոգևոր ավանդույթների պահպանման հարցում և խիստ ցավոտ էր արձագանքում հասարակությունից, նաև եկեղեցուց ներթափանցած տարբեր ախտերի՝ անտարբերությանը, տգիտությանը, գեղձարարությանը, անիրավություններին, կաշառակերությանը և այլնին՝ հորդորելով սթափության: Հրաշյա Թամրազյանը նկատում էր, որ «նա փորձում է վերականգնել հայ եկեղեցու խաթարված կարգերն ու ավանդույթը և դեմ է օտարասիրության և օտարադավանության ամեն դրսևորման: Այս առումով ընդգծում է մի չափազանց կարևոր միտք՝ հայոց եկեղեցու, կրոնի և հավատքի պահպանության հիմքերը հայոց լեզուն և գիրն են, հայ քրիստոնյա գոյություն չունի իր լեզվի և գրի սահմանից անդին»<sup>3</sup>:

Ինչպես նշում էր ինքը՝ Խոսրով Անձևացին. «Զի հաւ, որ յերուսաղեմէ ելանէ՝ մոլորական շրջի եւ քար, որ ի կարգէն ոստնու՝ յայլում վայրի գտեղի ոչ առնու: Այնպիսի պարտ է իմանալ, որք սակս մարմնոյ հեշտութեան ի փոխումն յօժարին, թէ ի մէնջ հեռանան՝ եւ ընդ այլ քրիստոնեայս ոչ դասին, զի Աստուած պահանջէ ի մարդոյ զհաւատ, զոր յաւազանէն էառ, թէպէտ մի՛ Քրիստոս, մի՛ Տէր և մի՛ մկրտութիւն, այլ ըստ սահմանի լեզուին եւ գրոյն զպահպանութիւն կարգին պահանջէ»<sup>4</sup>:

Նարեկյան դպրոցի երկրորդ ականավոր ներկայացուցիչը Անանիա Նարեկացին է: Նա հեղինակ է բազմաթիվ խրատական աշխատությունների, որոնք լայն տարածում էին ստացել: Այստեղ առատ նյութ կա վանական կենցաղավարության, բարոյագիտական միաստիկայի և այլ հարցերի մասին, իսկ հիմնականը մարդու ինքնամաքրման, փրկության խնդիրն է: Ա. Նարեկացին քաղկեդոնական ուսմունքի դեմ մաքառող նշանավոր տեսաբաններից է և այդ առնչությամբ է գրել իր «Հաւատարմատն» երկը: Հայտնի է նաև նրա «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցոց» աշխատությունը, որը ևս գիտական լայն համարում ուներ:

Նարեկյան դպրոցի երրորդ և ամենանշանավոր ներկայացուցիչը Սուրբ Գրիգոր Նարեկացին է: «Հոգեմտավոր սնունդ ստանալով Նարեկյան դպրոցի պարարտ միջավայրում, Գրիգոր Նարեկացին հուժկու թռիչքով հետևում թողեց այդ դպրոցը և ստեղծեց դարակազմիկ արժեքներ: Նրանից

<sup>3</sup> Թամրազյան 1999, 22:

<sup>4</sup> Խոսրով Անձևացի 1840, 43:

մեզ են հասել գանձեր, տաղեր, մեկնություններ, ներբողներ և «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը» (43):

Նարեկացու դեպքում ևս Բարխուդարյանը քաջածանոթ է ոչ միայն նրա ստեղծագործությանը, այլև նրան նվիրված գիտական բազմաթիվ աշխատությունների: Տեղի սղության պատճառով Նարեկացու գրական ժառանգությունը նա ներկայացնում է թեև համեմատաբար սեղմ, բայց համակողմանի: Նարեկացու՝ հայ քնարերգությանը նոր շունչ հաղորդած տաղերին հեղինակն անդրադառնում է նաև երաժշտության բաժնում՝ նշելով. «Երաժշտության բնագավառում X-XI դարերում կատարվող խոշոր տեղաշարժերը կապվում են Գրիգոր Նարեկացու անվան հետ: Այս շրջանում վերելք ապրող տաղերի արվեստը խթանում էր երգարվեստի մյուս ճյուղերի՝ շարականների վերստեղծմանը: Գր. Նարեկացին մեծ է նաև երաժշտության մեջ, նա այս բնագավառում ևս նվիրական անուններից է: Պատահական չէ, որ «Մատյան ողբերգության» մի շարք հատվածներ անցել են Մաշտոցների ժամերգության ու պատարագի արարողության մեջ՝ որպես աղոթքներ կամ մաղթանքներ: Աշխատության առանձին հատվածներ երգվել են» (151-152):

Նարեկացու անկապտելի փառքը իր «Մատյան ողբերգության» պոեմն է կամ Աղոթամատյանը, որի գերագույն նպատակը մարդկային հոգու փրկությունն է: Աղոթքով, ապաշխարությամբ, մեղքերից մաքրվելով մարդն ի զորու է հասնելու կատարելության և ծուլվելու Աստծո հետ: Այս ճանապարհը, սակայն, շատ է դժվարին, բայց ոչ անհնարին, համաձայն Քրիստոսի խոսքի, թե «Արդ եղերուք դուք կատարեալք, որպես եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»<sup>5</sup>:

Կատարելության հասնելու ճանապարհն ընթանում է բազմաթիվ խոչ ու խութերով, որոնց հաղթահարման համար Նարեկացու քնարական հերոսը դիմում է ինքնախարազանման, Տիրամոր, հրեշտակների և սրբերի բարեխոսությանը և, իհարկե, Աստծո անսահման ողորմածությանն ու գթությանը: «Բանաստեղծն իր տաղանդի ուժով ընկալում է բոլոր քրիստոնյաների ցավերն ու երազանքները: Նա իր անձնականի միջոցով ի հայտ է բերում օրինաչափություններ, արտահայտում համամարդկային երևույթներ... «Մատյանը» հավերժական արժեք ունեցող գործ է՝ գրված բոլոր քրիստոնյաների, գալիք սերունդների, համայն մարդկության համար» (49): Այս ամենով հանդերձ՝ «նա այնքան առատորեն է օգտագործում ժողովրդական բանահյուսությունը, որ պոեմը լիովին դառնում է ազգային» (47):

Բարխուդարյանը հիշում է նաև բազմաթիվ գիտնականների, որոնք իրենց աշխատություններում անդրադարձել են կամ աշխատություններ են

<sup>5</sup> Աստուածաշունչ մատենան, Նոր Կտակարան 1997, 5:

նվիրել Նարեկացու ստեղծագործությանը. Հրանտ Թամրազյան, Հրաչյա Թամրազյան, Պողոս Խաչատրյան, Մկրտիչ Մկրյան, Արշակ Չոպանյան, Մարտիրոս Սարյան, Ժենյա Քալանթարյան, Հովհաննես Թումանյան, Ս. Ավերինցև, Վ. Ռոգով, Միխայիլ Դուդին, Լև Օզերով, Ժան Պիեռ Մահե և այլն: Ի մասնավորի՝ նա նշում է մի ուշագրավ փաստ, այն, որ օտարազգի հետազոտողների տեսակետները լիովին համահունչ են հայ մասնագետների տեսակետներին:

Սուրբ Գրիգոր Նարեկացու ազդեցությունը հայ քնարերգության և գրականության վրա առհասարակ եղել է վիթխարի, ինչպես իր ժամանակին՝ միջնադարում, այնպես էլ հետագա դարերում՝ մինչև նոր ու նորագույն շրջան: Սակայն, ինչպես նշում էր անվանի գրականագետ Պողոս Խաչատրյանը, «Գրիգոր Նարեկացու գնահատումը, նրա ստեղծագործության առաջին իսկական արժեքավորումը կատարվեց Մեծ Հայքից դուրս, Կիլիկյան Հայաստանում, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի և Ներսես Լամբրոնացու միջավայրում, 12-րդ դարում և հետագայում: Առաջին երկուսը՝ Շնորհալին և Գրիգոր Տղան, նկատելիորեն կրում են Նարեկացու գրական ազդեցությունը, իսկ Լամբրոնացին, բացի այդ, բանաստեղծի հետ առնչվում է նաև նրանով, որ իր Պատարագի մեկնության մեջ քննության առարկա է դարձել «Ողբերգության մատյանի» ԼԳ գլխի երեք հատված»<sup>6</sup>:

Իսկ Հրաչյա Թամրազյանը գրում էր. «Նարեկյան դպրոցի ստեղծած միստիկ բարոյագիտության և հոգևոր կենցաղավարության ներքին կանոնները և սկզբունքները նրա նշանավոր գործիչների միջոցով տարածվում էին ժամանակի վանական միջավայրում և բավական կենսունակ էին նաև հետագա դարերում... Նրանք մուտք են գործում նաև Կիլիկիայի վանական միջավայր՝ տալով նաև իրենց տեսաբաններին, որոնցից նշանավորներն էին Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան և Ներսես Լամբրոնացին»<sup>7</sup>:

Ներսես Լամբրոնացին աշակերտել է Ներսես Շնորհալուն և Գրիգոր Տղային: Գրել է բանաստեղծություններ, արձակ, մեկնություններ, կատարել թարգմանություններ, զբաղվել մանկավարժությամբ: Նա գրել է «Գովեստ ներբողականը»՝ նվիրված Շնորհալու կյանքին ու գործունեությանը, որտեղ հատկապես հանգամանորեն անդրադարձել է «Ողբ Եդեսիոյ» պոեմին:

Գրիգոր Տղան եղել է օժտված հասարակական գործիչ, բանասեր, տարաբնույթ տաղերի հեղինակ: Նրա ստեղծագործություններն աչքի են ընկել խոհափիլիսոփայական ուղղվածությամբ:

Ինչպես նշում է հեղինակը, «Ներսես Շնորհալու (1100-1173) վրա Գրիգոր Նարեկացու ազդեցությունը որոշակի է: Նա ձգտել է պահպանել Նարեկացուց սկիզբ առած, նրանից եկող բանաստեղծության հիմնական

<sup>6</sup> Խաչատրյան 1996, 160:

<sup>7</sup> Թամրազյան 2007, 65:

հատկանիշները: Սակայն նա ոչ միայն յուրացրել է Նարեկացու ավանդները, այլև մշակել ու հարստացրել: Նրանց ընդհանրության հիմքում ընկած է համանման աշխարհընկալումը: Բանաստեղծությունը, ըստ նրանց, այնպիսի ստեղծագործություն է, որով մարդը հարաբերվում է Աստծո հետ... Նա բազմաժանր ստեղծագործող էր, բացի կոթողային «Յիսուս Որդի» և «Ողբ Եղեսիոյ» աշխատություններից, գրեց բազում շարականներ, տաղեր, գանձեր, երգեր: Նրա ժողովրդական բառ ու բանով գրված հարյուրավոր հանելուկներն արտացոլում էին առօրյա կյանքի երևույթները... Դժվար է պատկերացում կազմել մեր հոգևոր երգերի կարևոր մի բնագավառի՝ շարականների մասին՝ առանց Շնորհալու ստեղծագործություններին անդրադառնալու: Շարականների նյութը նա վերցրել է ոչ միայն Կտակարաններից, այլև հայ իրականությունից, իրական կյանքից... Նա հայրենասիրական մեծ պաթոսով ու ջերմ զգացումով երգեր է ձոնել Գրիգոր Լուսավորչի ու Սահակ Պարթևի, Տրդատ թագավորի, Վարդանանց ու Ղևոնդյանց հիշատակներին» (55-56):

Բարխուդարյանն անդրադառնում է նաև միջնադարում լայն տարածում ստացած գրական ժանրերին՝ հայրեններին, կաֆաներին, գուսանական երգերին, զրույցներին, առակներին և այլն: Առակագրության ասպարեզում մասնավորապես մեծ է Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու ավանդը, որոնք չափազանց կարևոր էին համարում պայքարը խարդախությունների, շահամոլության, ամեն տեսակ անարդարությունների դեմ, անխնա խարազանում էին ընչաքաղցությունը, ուժ գործադրելը, կաշառակերությունը, բարոյական անկումը՝ գովերգելով ազնիվ ու ստեղծագործ աշխատանքը, արդարությունը:

Փոփոխությունների էր ենթարկվում նաև հայոց լեզուն: «X դարից սկսած ծնունդ է առնում միջին հայերենը: Կիլիկիայում պետական լեզու դարձած միջին հայերենը գրաբարից լրիվ չէր առանձնացել, սակայն ավելի մատչելի էր ու համապատասխանում էր ժամանակի պահանջներին: Միջնադարի գործիչները ձգտում էին գրել ժողովրդական լեզվով, որ հասկանալի լինի բոլորին» (60):

Այս հեղինակը խոսում է միջնադարի հայ տաղերգուների մասին՝ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների, Հովհաննես Թլկուրանցու, Ֆրիկի և այլոց: «Հ. Երզնկացին, բազմաբնույթ ու ծանրակշիռ գիտելիքների տեր լինելով հանդերձ, անվանի ու մեծ է որպես բանաստեղծ՝ տաղերի, շարականների, ողբերի, մեղեդիների հեղինակ: Նրա ստեղծագործությունների մեջ գերակշռում են խոհախրատական բանաստեղծությունները... Հ. Երզնկացին նաև նշանավոր մանկավարժ էր: Երեխայի դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար մշակել էր հատուկ մեթոդներ, որոն-

ցում նկատի էր առել մանուկ հասակի հետ կապված հոգեբանական առանձնահատկությունները» (62):

Երզնկացին ունի քերականության մասին նշանակալի մեկնություններ: Այդ մասին է գրում ակադեմիկոս Գևորգ Զահուկյանը. «Երզնկացին ի մի է հավաքել և ճարտար կերպով ամբողջացրել քերականների նախորդ սերունդների կատարած աշխատանքը՝ փոխարինելով դպրոցական գործում մինչև այդ լայն հեղինակություն վայելող Մագիստրոսի կոմպիլյացիան մի նոր աշխատությամբ, որը դրվեց հետագա ուսուցման հիմքում: Այս աշխատության մասսայականության մասին են վկայում մեզ հասած բազմաթիվ ձեռագրերը»<sup>8</sup>:

Հովհաննես Պլուզից հետո Բարխուդարյանն անդրադառնում է նրան հաջորդող հայրենակցի՝ Կոստանդին Երզնկացու ստեղծագործությանը: Վերջինի քնարերգության մեջ տիրապետող էին մարդն ու բնությունը իրենց ողջ գեղեցկությամբ: Բավական է հիշել Վալերի Բոյուսովի արտահայտած կարծիքը գարնան զարթոնքին նվիրված տաղի վերաբերյալ. «По стилю по энергии стиха и языка поэма сделала бы честь любой литературе Западной Европы того века, и Европе даже нечего было ей противопоставить»<sup>9</sup>:

Այնուհետև հեղինակը խոսում է մեկ այլ անվանի բանաստեղծի՝ Ֆրիկի ստեղծագործության մասին: Հիշատակում է նաև հասուն միջնադարի գրական կյանքի այլ հայտնի գործիչների՝ Մխիթար Այրիվանեցի, Խաչատուր Կեչառեցի, Առաքել Բաղիշեցի և ուրիշներ, որոնք իրենց նպաստն են բերել հայ գրականության զարգացման գործում:

### Եզրակացություններ

Վլադիմիր Բարխուդարյանն իր երկրային կյանքի մայրամուտին ընթերցողի սեղանին է դրել անչափ կարևոր մի մենագրություն, որում լավագույնս է ներկայացրել զարգացած միջնադարի շրջանը, նրա ոգին և այդ ոգու ամենավառ արտահայտիչը՝ մշակույթը, որպես ժողովրդի հոգեմտավոր կարողությունների դրսևորման լավագույն ձև: Գրքի կարևորությունն ընդգծվում է նաև նրանով, որ այն ընդգրկում է քննության առնված նյութի շատ լայն շրջանակ և կարող է օգտակար լինել ոչ միայն պատմաբանների, այլև բանասերների, մանկավարժների, տնտեսագետների, բնագետների, արվեստաբանների և այլ մասնագիտությունների տեր մարդկանց համար՝ հիմք դառնալով նոր ուսումնասիրությունների ու հետազոտությունների: Գիրքը, որը հեղինակն իրեն հատուկ համեստությամբ անվանել է «Ուրվագիծ...»:

<sup>8</sup> Զահուկյան 1958, 260:

<sup>9</sup> Брюсов 1916, 50.



### Գրականություն

- Աստուածաշունչ մատենան 1997, Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, տպ. Մեծ Բրիտանիայում, 1450 էջ:
- Բարխուդարյան Վ. 2016, Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության X-XIV դդ., Երևան, «Գիտություն», 232 էջ:
- Թամրազյան Հ. 2007, Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոց, Երևան, «Նաիրի», 202 էջ:
- Թամրազյան Հ. 1999, Նարեկյան դպրոցը, Երևան, «Հայաստան», 233 էջ:
- Խաչատրյան Պ. 1996, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 396 էջ:
- Խոսրով Անձեազի 1840, Մեկնություն ժամանակագրության, Օրթագիտ, Կ. Պոլիս, տպ. «Երից որդոց Պողոսի Արապեան Ապուչեխեցոյ», 259 էջ:
- Ջահուկյան Գ. 1954, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, ԵՊՀ հրատ., 396 էջ:
- Брюсов В. 1916, Поэзия Армении, Москва, изд. «Моск. Арм. Ком.», 528 с.

### ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐԸ ԻՐ ՎԵՐՋԻՆ ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կարինե Առաքելյան

2016 թվականին ականավոր պատմաբան, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը ընթերցողի սեղանին դրեց իր վերջին մենագրությունը՝ «Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության X-XIV դդ.»՝ նվիրված նշված դարաշրջանի հայ մշակույթի պատմությանը, որը զարգացած միջնադարի շրջանում բուռն վերելք էր ապրում՝ հասնելով զարգացման բարձրագույն աստիճանի: Հատկապես գրքի բանասիրական ժառանգությանը նվիրված հատվածը լավագույնս է արտահայտում դարաշրջանի ոգին, երբ գրական ստեղծագործությունների հիմնական թեմաները դարձան սերը, գեղեցկությունը, հայ ժողովրդի հոգևոր կյանքը, ազատությունը, արդարությունը, արժանապատվությունը, աշխատանքի գովերգումը, մարդասիրությունը և այլն:

**Բանալի բառեր՝** Աստվածաշունչ մատյան, Նարեկ, ժողովրդական էպոս, կրթություն, գիտություն, արվեստ, բանասիրություն:

### ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИЗЫСКАНИЯ ИЗВЕСТНОГО ИСТОРИКА В ЕГО ПОСЛЕДНЕЙ МОНОГРАФИИ

Карине Аракелян

В 2016 году известный историк, академик Владимир Бархударян издал свою последнюю монографию «Очерк истории средневековой ар-

мянской культуры X-XIV вв.», посвященную истории армянской культуры периода развитого средневековья. Особый интерес представляет раздел монографии, рассматривающий филологическое наследие этого исторического отрезка, наилучшим образом олицетворяющее образ эпохи и постулирующее гуманистические идеалы – духовность, свободу, справедливость, человеколюбие и т.д.

**Ключевые слова** – Библия, Нарекаци, народный эпос, образование, наука, искусство, филология.

### THE PHILOLOGICAL SEARCHES OF A WELL-KNOWN HISTORIAN IN THE FRAMES OF HIS LAST MONOGRAP

Karine Arakelyan

In the evening of his earthly life, in 2016 the well-known historian Academician Vladimir Barkhodashyan put on the readers' table his last study: "The Essay of the Armenian Cultural History of Middle Ages in X-XIV centuries", which is devoted to the history of Armenian culture in the above-mentioned period experiencing rapid flourishing in all its spheres and having achieved the highest level of its development. The article particularly analyses the part of the book, which is devoted to the philological legacy, which embodies the best spirit of the age, when themes of love, beauty, spiritual life of the Armenian people, freedom, justice, dignity, labour praising, humaneness, etc. underlay the literary works.

**Key words** – Bible, Narek, national epic, education, science, art, philology.